REPUBLIC OF ARMENIA
ARAGACOTN PROVINCE
<<ASHTARAKI BJSHKAKAN
KENTRON>> CJSC

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ АРАГАЦОТН ЗАО
<<АШТАРАКИ БЖШКАКАН
КЕНТРОН>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
<<ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>ՓԲԸ

/0232/ 3-19-49
FAX: /0232/ 3-19-49

30.01.2024թ

Ագաստ ՍՊԸ տնօրեն

Գ. Մուրադյանին

Հարգելի տիկին Գ. Մուրադյան,

Աշտարակի ԲԿ ՓԲԸ և Ագաստ ՍՊԸ միջև 08.01.2024թ ԱՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04-Ա ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր մինչև 25.01.2024թ մատակարարել որոշակի քանակությամբ դեղորայք: Բազմիցս տրվել է պատվեր բանավոր կարգով, սակայն դեղորայք չի մատակարարվել: 22.01.2024թ գրավոր կարգով տրվել է համապատասխան պատվեր, սակայն 29.01.2024թ ապրանքը մատակարարվել է մասամբ՝ քիչ քանակի, որը առաջացնում է խնդիրներ բնակչությանը դեղորայքով ապահովելու համար:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը , 30.01.2024թ –ից միակողմանի մասնակի լուծել վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ Ագաստ ՍՊԸ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում **220045140070500** բանկային հաշվեհամարին փոխանցել 816282 /ութ հարյուր տասնվեց հազար երկու հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ որակավորման ապահովում, 544188/ հինգ հարյուր քառասունչորս հազար հարյուր ութսունութ/ ՀՀ դրամ պայմանագրի ապահովում:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և /կամ/ պայմանագրով սահմանված չի վճարել հայտի, պայմանագրի և /կամ / որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2024թ փետրվարի 7**-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարները, ապա Ագաստ ՍՊԸ չի ներառվի գնումների գորընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ԱՇՏԱՐԱԿԻ ԲԿ ՏՆՕՐԵՆ Ա.Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

RA Aragacotn provice
t. Ashtarak, Narekaci 61
E-mail: ashtaraki.bk@mail.ru

ՀՀ Արագածոտնի մարզ,
ք. Աշտարակ, Նարեկացի 61
էլ. հասցե ashtaraki.bk@mail.ru

РА Марз Арагацотн
г. Аштарак, Нарекаци 61
Эл. Адресс: ashtaraki.bk@mail.ru